

ման 42 տոկոսը: Մինչդեռ այդ սարքավորումների աշխատամասների միայն 25—35 տոկոսն է արտադրողարար օգտագործվում: Այնուհետև ցույց է տրված, որ ձեռնարկության հիմնական արտադրական ֆունկցիոնալ կազմում են նախագծով նախատեսվածի 106 տոկոսը, այնինչ՝ թույլարկվող արտադրանքի ծավալը կազմում է նախագծային ծավալի մինչև 50 տոկոսը: Զեկուցողը նշեց հիմնական ֆունկցիոնալ և արտադրական կարողությունների օգտագործման բարելավման ուղիները:

«Աշխատավարձի կազմակերպման բարելավման մի քանի խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Վ. Գրիգորյանը: Զեկուցման մեջ տրվեց օղորդվածի ժամանակ աշխատանքի արդյունքների նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության ապահովման սկզբունքը, աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի կապը և նրանց փոխադարձ ներգործությունը: Աշխատավարձի ձևի միջոց ընտրությունն ու կիրառումը կարող է էֆեկտիվ լինել այն դեպքում, երբ որակական ցուցանիշների համար կիրառվում է խրախուսման համապատասխան սխեմա: Մինչդեռ խրախուսման սխեման զործարանում լրիվ բացակայում է: Զեկուցողը առաջ քաշեց բարձր և ցածր վարձատրվող բանվորական խմբերի աշխատավարձի տարբերությունները կրճատելու և կարգավորելու մի քանի հարցեր:

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն:

Մեխանիկական ցեխի կոմունիստական աշխատանքի բրիգադայի բրիգադիր Ե. Անդրանիկյանը իր ելույթում ընդգծեց սարքավորման օգտագործման և բարձր որակի ներդրման կարևորությունը, ինչպես նաև բրիգադայի ներսում աշխատանքի կազմակերպման կատարելագործման հարցերը:

Ավագ գիտ. աշխատող Վ. Խոջարեկյանը կանգ առավ աշխատամասների կորուստների և արտադրության ռիմիկ կազմակերպման բարելավման հարցերի վրա: Աշխատանքի և աշխատավարձի բաժնի պետ ընկ. Վ. Տոնոյանը ցույց տվեց, որ զործարանի աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման դործում դեռ կան լարջ թերություններ: Մի շարք միջոցառումները շեղվելով այդ հարաբերությունը, ըստ ձևական ցեխի, բերվեց համապատասխանության: Միաժամանակի աշխատանքի պլանավորման մեջ տեղ գտած թերությունները վերացնելու համար կազմվել է աշխատանքի նորմավորման գրաֆիկ: Մեխանիկական ցեխի բանվոր ընկ. Կ. Մալոյանը խոսեց ԳՈՒ մյուս ինստիտուտների, մասնավորապես տեխնիկական թերում ունեցող ինստիտուտների և զործարանի կապի անհրաժեշտության մասին: Այդ կապը կնպաստի թողարկվող հաստոցների տեխնոլոգիան և կոնստրուկցիան բարելավելուն: Կոնֆերանսում ելույթ ունեցան նաև պլանային-արտադրական բաժնի պետ Կ. Կեռիկովը և կրտսեր գիտ. աշխատող Է. Ազարյանը:

Տնտեսագիտության ինստիտուտի արդյունաբերության էկոնոմիկայի սեկտորի վարիչ Ա. Զորոգացյանը նշեց ինստիտուտի ուժերով կոնկրետ էկոնոմիկական ուսումնասիրությունների խմբի կազմակերպելու անհրաժեշտությունը: Խմբերում կարելի է ընդգրկել ինչպես բանվոր-ներին, այնպես էլ ինժեներա-տեխնիկական աշխատողներին: Այդ միջոցառումը կբարձրացնի նրանց տնտեսական գիտելիքների մակարդակը և կարևոր պայման կհանգիստանա արտադրական օժգործների հայտաբերման, մոբիլիզացման և օգտագործման ուղղությամբ: ՀՍՍՌ Ժողովուրդների Մեքենաշինության և հասանցաշինության գլխավոր ինժեներ Վ. Խուրյախյանը իր ելույթում ողջունեց ԳՈՒ Տնտեսագիտության ինստիտուտի նախաձեռնությունը, նշեց կոնֆերանսի վարչերությունը՝ ներառադրական օժգործների հայտաբերման և օգտագործման կարևորության անպարելելի:

Ի. Գ. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ

Տ. ՇԵՎԵՆԿՈՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՄԱՆԱԿԱՆ ԱԵՍԻԱՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշմամբ աշխարհի առաջադեմ մարդկությունը մարտ ամսին նշեց ուկրաինական ժողովրդի մեծ դավակ, խոսքի հանճարեղ վարպետ Տարաս Գրիգորենի Շենկևիչի մահվան 100-ամյակը: Այդ նշանավոր տարեթիվն էր նվիրված Մանուկ Արևելյանի անվան Դրականության ինստիտուտի մարտի 18-ի գիտական սեսիան:

Իր քաղման խոսքում Հակակառ ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Կարինյանը Շենկևիչին բնութագրեց որպես իր ժողովրդի և աշխատավոր մարդկության վշտերի մեծ երգչի, որի ողջ ստեղծագործությունը մի համարձակ կոչ էր ընդդեմ բռնության ու

ղեկավարող Մ. Ա. Կարինյանը կանգ առավ հատկապես Շենկենկոյի՝ կյանքի հետ ունեցած ամուր կապի վրա։ Նա հատկապես շեշտեց Շենկենկոյի մանկության տարիների ծանր ճակատագրի դերը պոետի ունեցած ինքնակրատական աշխարհայացքի ձևավորման գործում։ Իրականության ուսման պատկերումը, զուգակցված անվահեր մարտակոչով կյանքի շարիքի դեմ, ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում մնում էր նրա հանճարեղ գործերի իշխող մոտիվը։

Անկաղմիկոս Կարինյանը ցույց տվեց, որ Շենկենկոյի ստեղծագործությունները դադարում են միայն ուկրաինական ժողովրդի սեփականությունը լինելուց և ստանում են համամարդկային էշանակություն, որովհետև պաշտպանելով իր ժողովրդի շահերը, Շենկենկոն դրանով իսկ պաշտպանում էր ճնշված ժողովուրդների շահերն առհասարակ։

Մեծ էր Շենկենկոն նաև իբրև նկարիչ։ Բազմակողմանիորեն օժտված պատանին իր առաջին ընդունակություններն է հայտ բերեց նկարչության ասպարեզում։ Այդ ընդունակությունները զարգացնելով Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում, ուր սովորեց յոթ տարի, նա ստեղծեց մի շարք արժեքավոր գործեր, որոնց մեջ ևս հավատարիմ մնաց վերահիշյալ մոտիվներին։

Վերջում Մ. Ա. Կարինյանը կանգ առավ Շենկենկոյի ժառանգության հայերեն թարգմանության պատմության վրա և ցույց տվեց, որ այդ պատմության արժանատիները հասնում են մինչև անցյալ դարի 70-ական թվականները։

Բանասիրական գիտությունների դոկտոր Սալոմե Արեշյանը՝ համառոտակի բնութագրելով մեծ գրողի հարուստ ժառանգությունը, մասնավորապես կանգ առավ այն հոգեհարազատության վրա, որ կար շենկենկոյական գաղափարների և հայ ժողովրդի մտորումների ու տենչերի միջև։

Բնորոշելով Շենկենկոյի նկարչական ստեղծագործությունը, արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Գրամբյանը նշեց, որ դեռևս փոքր հասակից Շենկենկոն իր վրա հրավիրեց խոշորագույն ուսու նկարիչ Բրյուլովի ուշադրությունը։ Մի խումբ ուսու նկարիչների հավաքած միջոցներով Շենկենկոն ազատվեց ճորտությունից և ընդունվեց Գեղարվեստի ակադեմիան։ Սակայն գուրս եկավ ակադեմիական շկոլայի տրադիցիոն մաներաների շրջանակից։ Իր համար որպես թեմա ընտրեց «հատակի մարդկանց» առօրյան ու ճակատագիրը։

Կանգ առնելով Շենկենկոյի նշանավոր կտավների, նրա գրավյուրային, օֆորտային ու տրտրետային մի քանի գործերի վրա, զեկուցողը ցույց տվեց, որ դրանք նորություններ էին նկարչական արվեստի բնագավառում։

Բանաստեղծ Գեղամ Սարյանի զեկուցման թեման էր «Կոբզարը հայերեն»։ Համառոտակի ուրվագծելով Շենկենկոյի նախադրություն շրջանի հայերեն թարգմանությունները, պոետ-թարգմանիչը հատկապես կանգ առավ սովետական շրջանի վրա, երբ միայն հնարավոր եղավ մեծ Կոբզարի շատ գործերի հայերեն թարգմանությունը։ Նրա առաջին հայերեն թարգմանված բանաստեղծությունը երևաց 1879 թ. «Բազմավեպի» էջերում, պոետ Փուլնարյանի թարգմանությամբ։ Հետագայում այդ թարգմանությունները բազմապատկվեցին։

Զեկուցման վերջում Գ. Սարյանը կանգ առավ հանճարեղ բանաստեղծի երգիծական պոեզիայի վրա, ցույց տվեց դրանց քաղաքական ու սոցիալական հազեցվածությունը։

Ա. ՕՉԱՆՅԱՆ